

## Օգտագործված տարայի մշակման քաղաքականություն

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը հանձնառել է շարունակաբար բարելավել շրջակա միջավայրին վերաբերող գործունեությունը փաթեթավորման և օգտագործված տարայի ոլորտում: Կոկա-Կոլա Հելլենիկ Ընկերությունն իր բոլոր շուկաներում ստանձնել է շարունակական բարելավման հանձնառություն, որի արդյունավետությունը չափվում է և գնահատվում:

Ընկերությունը աջակցում է բոլոր երկրներում օգտագործված տարային վերաբերող ծրագրերի իրականացմանը: Այդ ծրագրերի նպատակներն են՝

- Համատիրել երկրի օգտագործված տարայի մշակման ծրագրերին (թափոնների վերամշակման կազմակերպությունների միջոցով).
- Ակտիվորեն անդամակցել Թափոնների վերամշակման կազմակերպությունների Կառավարման խորհրդին՝ բարձր մակարդակի պատշաճ մասնակցությամբ:
- Որպես թափոնների վերամշակման կազմակերպությունների լիազորված անդամ տիրել և պատասխանատվություն կրել հավաքած նյութերի համար:
- Ներդնել վերամշակման կազմակերպման արդյունավետ սխեմաներ՝ հնարավորինս ցածր կայուն գներով:
- Մշակել և իրականացնել Բիզնես ծրագրեր՝ ամենաբարձր չափանիշներին համապատասխան:

Այս նպատակներին հասնելու համար Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը՝

- Կատարելագործում է օգտագործված տարայի հավաքման սխեմաները և նպաստում է սպառողների իրազեկության բարձրացմանը:

- Մասնակցում է հանրային իրազեկության բարձրացման ծրագրերին, թափոնների տարբերակված հավաքման վերաբերյալ ուսուցմանը և շրջակա միջավայրի աղտոտման դեմ քարոզարշավներին:
- Աշխատում է պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի հետ՝ ստեղծելու այնպիսի իրավական դաշտ, որտեղ հնարավոր կլինի միաժամանակ ապահովել տնտեսական առաջընթացը, թափոնների թաղումից խուսափելը և արտանետումների կրճատումը:
- Պաշտպանում է այն տեսակետը, որ հանրային քաղաքականությունը և կարգավորիչ միջամտությունները պետք է խրախուսեն պատշաճ տեխնոլոգիական լուծումները և լրացնեն շուկայական մեխանիզմները:
- Կողմնակից է այն գործելակերպի զարգացմանն ու տարածմանը, երբ հանրային միջոցառումներից հետո կազմակերպվում է օգտագործված տարայի հավաքում՝ շրջապատի աղտոտումից խուսափելու նպատակով:
- Աշխատում է փաթեթավորման փակ ցիկլով աշխատելու ուղղությամբ:
- Ձգտում է ներդրումներ կատարել օգտագործված յուրաքանչյուր շիջ վերամշակման միջոցով նոր շիջ (Bottle-to-Bottle) արտադրող գործարանների կառուցման մեջ կայուն ռեսուրսներ (օրինակ, օգտագործված պոլիէթիլենային շշերի հավաքման շահավետ և արդյունավետ սխեմաներ) ունեցող բոլոր երկրներում:
- Փաթեթավորման ու օգտագործված տարայի ռազմավարություններն ընդգրկում է տարեկան բիզնես պլանավորման գործընթացում, որպեսզի այն կազմի ընկերության ընդհանուր գործունեության անքակտելի մասը:
- Սահմանում է սննդի անվտանգության և որակի չափելի տարեկան նպատակներ իր գործունեության բոլոր շուկաներում՝ խմբի մակարդակով ապահովելու համար շարունակական բարելավումը և համապատասխանությունը բոլոր չափորոշիչներին:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը ձգտելու է.

- Ազդել քաղաքականության, կարգավորումների և նորարարության վրա՝ զարգացնելով կառուցվածքային երկխոսությունը շահագրգիռ կողմերի հետ, որը կնպաստի փաթեթավորման փակ ցիկլով լուծումներ գտնելուն, կիրախուսի շուկայական մեխանիզմներն ու առաջ կմղի տեխնոլոգիական տեսակավորման իննովացիաները:
- Ակտիվացնել փաթեթավորման միջոլորտային ասոցիացիաների գործունեությունը՝ նպատակ ունենալով սատարել օգտագործված փաթեթավորման և փաթեթավորման նյութերի բնապահպանական ազդեցությունը չեզոքացնելու լուծումներին:
- Ապահովել, որ Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության սպառողները ունենան ապրանքների և փաթեթավորումների ընտրության ազատությունը:
- Բարձրացնել օգտագործված փաթեթավորման մշակմամբ զբաղվող կազմակերպությունների գործունակությունն ու աշխատանքի արդյունավետությունը:
- Շարունակել ավելի թեթև քաշով սկզբնական փաթեթավորմանն ուղղված ջանքերը և խրախուսել բազմակի օգտագործման և ավելի խնայողական փաթեթավորման կիրառումը:
- Շարունակել ավելացնել զովացուցիչ ըմպելիքների փաթեթավորման մեջ վերամշակված նյութերի օգտագործումը՝ շեշտը դնելով պոլիէթիլենային (PET) շշերի վրա:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ Օգտագործված տարայի մշակման սույն քաղաքականությանը, որը ճանաչվել և հաստատվել է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կոմիտեի կողմից: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության

յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում այս ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն